



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի, Հեռ 060 28 50 13 E-mail [mayakovski-1@mail.ru](mailto:mayakovski-1@mail.ru)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» մայիսի 2018 թվական N 59-Ա

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի 57-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՁԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՅՈՒ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի աճուրդային հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 22-ի աճուրդի արձանագրության լուծարման մասին համաձայնագիրը և քաղաքացի Վահագն Էվինյանի 2018 թվականի մայիսի 22-ի դիմումը համայնքապետարանի հաշվին վճարված գումարը հետ վերադարձնելու մասին՝ **որոշում եմ.**

1. Անվավեր ճանաչել Մայակովսկի համայնքի ղեկավարի 2018 թվականի «Մայակովսկի համայնքի սեփականությունը հանդիսացող շարժական գույքի աճուրդի արդյունքները հաստատելու մասին» 57-Ա որոշումը :
2. Քաղաքացի Վահագն Էվինյանին հետ վերադարձնել ավտոմեքենայի օտարման նպատակով Մայակովսկի համայնքապետարանի 900215304354 հաշվարկային հաշվին վճարված 1 130 000 /մեկ միլիոն հարյուր երեսուն հազար / ՀՀ դրամ գումարը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի  
2018թ.մայիսի 23



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի, Հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
«30» մայիսի 2018 թվական N 60-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48 -րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի բնակիչներ Անահիտ Խաչատրյանի և Բաբկեն Մարտիրոսյանի դիմումները օգնության մասին և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, հաշվի առնելով նրանց ընտանիքի սոցիալական վիճակը.

**որոշում եմ՝**

1. Մայակովսկի համայնքի 2018 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից տալ դրամական օգնություն.  
 Անահիտ Խաչատրյանին- 45 000 / քառասունհինգ հազար/ դրամ ,  
 Բաբկեն Մարտիրոսյանին -40 000 / քառասուն հազար/ դրամ,  
 Ընդամենը 85 000 / ութսունհինգ հազար/ դրամ :
2. Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :  
 Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ. Մայակովսկի  
2018թ. մայիսի 30